ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով երկու պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը, տնտեսական, առևտրային, գիտատեխնիկական, մշակութային և այլ կապերի ամրապնդմանը նպաստելու ցանկությամբ,

իրենց պետությունների քաղաքացիների այցելությունները կարգավորելու նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Մի Կողմի պետության քաղաքացիները կարող են մուտք գործել, դուրս գալ, տարանցիկ երթևեկել և գտնվել մյուս Կողմի պետության տարածքում առանց արտոնագրերի՝ սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ Հավելվածներում նշված՝ անձը հավաստող և քաղաքացիությունը հաստատող որևէ փաստաթղթով:

Կողմերի պետությունների քաղաքացիների մուտքն ու ելքը իրականացվում է միջազգային հաղորդակցության համար բաց անցակետերով:

Հոդված2

Կողմերը կանոնավոր կերպով տեղեկացնում են միմյանց սույն Համաձայնագրի դրույթների կիրառման ոլորտին վերաբերող հարցերի, մասնավորապես՝ անձը հավաստող և քաղաքացիությունը հաստատող գործող փաստաթղթերի, դրանք տալու և օգտագործելու կարգում փոփոխությունների, Կողմերի պետությունների տարածքում օտարերկրյա քաղաքացիների կեցության կանոնների, ինչպես նաև օրենսդրության համապատասխան ակտերի մասին:

Անձը հավաստող և քաղաքացիությունը հաստատող նոր փաստաթղթեր գործածության մեջ մտցնելու կամ գործող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում Կողմերը դիվանագիտական ուղիներով փոխանակում են դրանց նմուշները դրանք գործածության մեջ մտցնելուց առնվազն 30 օր առաջ:

Հոդված 3

Կողմերից մեկի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու ժամանակ պարտավոր են պահպանել գտնվելու վայրի Կողմի պետության օրենքները և կանոնները:

Մի Կողմի պետության քաղաքացիները, որոնք մյուս Կողմի պետության տարածքում խախտել են սույն Համաձայնագրի դրույթները կամ կեցության կանոնները, կրում են պատասխանատվություն՝ գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հոդված 4

Բացառիկ դեպքերում (ազգային անվտանգության, հասարակական կարգին կամ քաղաքացիների առողջությանը վտանգ սպառնալու, այդ թվում՝ համաճարակների, տարերային աղետների դեպքում) Կողմերը իրավունք ունեն ժամանակավորապես, մասամբ կամ ամբողջովին կասեցնել սույն Համաձայնագրի գործողությունը: Սույն Համաձայնագրի գործողության կասեցման, ինչպես նաև դրա գործողությունը վերականգնելու մասին որոշում ընդունող Կողմը նախապես՝ ոչ ուշ, քան 72 ժամ առաջ, դիվանագիտական ուղիներով հայտնում է մյուս Կողմին:

Հոդված 5

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն արձանագրություններով, որոնք սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման շուրջ վեճերը և տարաձայնությունները կլուծվեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին Կողմերից մեկի գրավոր ծանուցումը մյուս Կողմի ստանալուց հետո 90 օր անց:

Կատարված է Մինսկ քաղաքում, 2002 թվականի հունիսի 6-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր

տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման շուրջ հնարավոր տարաձայնությունների դեպքում կկիրառվի ռուսերեն լեզվով տեքստը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից՝**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների փոխադարձաբար առանց արտոնագրերի այցելությունների մասին» Համաձայնագրին կից

Բելառուսի Հանրապետության տարածք մուտք գործելու, դուրս գալու, տարանցիկ երթևեկելու և գտնվելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վավերական փաստաթղթերի ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր.
2. Դիվանագիտական անձնագիր.
3. Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Հայաստանի Հանրապետություն վերադարձի համար):

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների փոխադարձաբար առանց արտոնագրերի այցելությունների մասին» Համաձայնագրին կից

Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, դուրս գալու, տարանցիկ երթևեկելու և գտնվելու համար Բելառուսի Հանրապետության քաղաքացիների վավերական փաստաթղթերի ցանկ

1. Բելառուսի Հանրապետության քաղաքացու անձնագիր.
2. Դիվանագիտական անձնագիր.
3. Ծառայողական անձնագիր.
4. Նավաստու անձը հաստատող ազգային վկայական.
5. Բելառուսի Հանրապետություն վերադարձի վկայական (միայն Բելառուսի Հանրապետություն վերադարձի համար):